

## Բնապահպանական մշտադիտարկման հաշվետվություն

Ծրագրի համարը՝ 42145-043

Հունվար-հունիս 2022թ.

Հայաստան. Հյուսիս - Հարավ Ճանապարհային Միջանցքի  
Ներդրումային Ծրագիր  
Տրանշ 3

Պատրաստվել է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի կողմից Ասիական զարգացման բանկի համար:

Բնապահպանական մշտադիտարկման սույն հաշվետվությունը վարկառուի փաստաթուղթն է: Այստեղ արտահայտված տեսակետները պարտադիր չէ, որ ներկայացնեն ԱԶԲ Տնօրենների խորհրդի, տնօրինության կամ անձնակազմի տեսակետները և կարող են նախնական լինել:

Ցանկացած երկրի ծրագիր կամ ռազմավարություն պատրաստելիս, որևէ ծրագիր ֆինանսավորելիս կամ սույն փաստաթղթում որոշակի տարածաշրջանի կամ աշխարհագրական տարածքի որևէ նշում կամ հղում կատարելիս՝ Ասիական զարգացման բանկը մտադիր չէ որևէ դատողություն անել ցանկացած տարածաշրջանի կամ տարածքի իրավական կամ այլ կարգավիճակի վերաբերյալ:

*Բնապահպանական մշտադիտարկման կիսամյակային հաշվետվություն  
Հայաստան. Հյուսիս - Հարավ ճանապարհային միջանցքի մերդրումային ծրագիր, Տրանշ 3,  
Թային-Լանջիկ ճանապարհահատված*

Ծրագրի համարը՝ 42145  
Հունվար-հունիս 2022թ.

**Հայաստան. Հյուսիս - Հարավ ճանապարհային Միջանցքի  
Ներդրումային Ծրագիր  
Տրանշ 3**

**(Ֆինանսավորվում է ԱԶԲ-ի կողմից)**

Կազմվել է «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի կողմից  
ՀՀ, Երևան

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ .....	1
2. ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԸՆԹԱՑԻԿ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ .....	2
3. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ .....	6
4. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ .ERROR! BOOKMARK NOT DEFINED.	
5. ՏՇՄԿՊ-Ի ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ .....	ERROR! BOOKMARK NOT DEFINED.
6. ԱՌԱՋՆԱՑԻՆ ՊՐԱԿՏԻԿԱ ԵՎ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ .....	16
7. ԲՈՂՈՔՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄ .....	17
8. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ .....	
Error! Bookmark not defined.	
9. ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆ 2022Թ.ՀՈՒԼԻՍ-ԴԵԿՏԵՄԲԵՐ .....	28

## ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ Ա. Շինարարական ընթացքի լուսանկարներ (ճանապարհի սպասարկման աշխատանքներ)

ՀԱՎԵԼՎԱԾ Բ. Տրանշ 3, Թալին-Լանջիկ ճանապարհահատվածի ՏՇՄԿՊ-երի կարգավիճակը և տեղանքի շահագործումը՝ 2022թ. հունիսի 30-ի դրությամբ

## Հապավումների ցանկ

ԱԶԲ	Ասիական զարգացման բանկ
ԿՇՄԿՊ	Կապալառուի Շրջակա միջավայրի կառավարման պլան
ՇՄԿՊ	Շրջակա միջավայրի կառավարման պլան
ՇՄԱԳ	Շրջակա միջավայրի ազդեցության գնահատում
ՆԲԳ	Նախնական բնապահպանական գնահատում
ԲՄ	Բնապահպանության գծով մասնագետ
ԲԱԿԾՂ	Բնապահպանական ազդեցությունների կառավարման ծառայության ղեկավար
ԲՖԳ	Բազմափուլային ֆինանսական գործիք
ԲՆ	Բնապահպանության նախարարություն
ՏԿԵՆ	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
ԿԳՄՄՆ	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
ՏՇՄԿՊ	Տեղանքին բնորոշ շրջակա միջավայրի կառավարման պլան
ԵԿՊ	Երթևեկության կառավարման պլան
ՃԴ	«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամ
ԲՄՀ	Բնապահպանական մոնիթորինգի հաշվետվություն
ԵԿՊ	Երթևեկության կառավարման պլան
ՃԴ	«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամ
ԲՄՀ	Բնապահպանական մոնիթորինգի հաշվետվություն

## **1 ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ**

### **1.1 Նախաբան**

Սույն Բնապահպանական մշտադիտարկման կիսամյակային հաշվետվությունը ընդգրկում է 2022թ-ի հունվարից հունիս ընկած ժամանակահատվածը (թիվ 12):

Հաշվետվությունը պատրաստվել է «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի կողմից Վերահսկող Խորհրդատուի հետ սերտ համագործակցությամբ, որը «Սպեա Ինջինիերինգ» և «ԱյԱրԴի Ինջինիերինգ» ընկերությունների համատեղ ձեռնարկությունն է:

### **1.2 Հիմնական տեղեկատվություն**

Շինարարական աշխատանքները իրականացվել են Կորսան Կորվիամ Քոնստրուկսին Էս.Էյ. ընկերության և վերջինիս ենթակապալառու «Էս ընդ Էյ Մայնինգ» ՍՊԸ կողմից, իսկ շինարարության վերահսկողությունն իրականացվել է «Սպեա Ինջինիերինգ» և «ԱյԱրԴի Ինջինիերինգ» կոնսորցիում համատեղ կազմակերպության կողմից:

Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում Կապալառուն Թային-Լանջիկ ճանապարհահատվածում իրականացրել է հետևյալ շինարարական գործողությունները՝ հողային աշխատանքներ, հանույթ, ենթահիմքի, հիմքի և ասֆալտային պատվածքի, ջրահեռացման խողովակների կառուցման, ինչպես նաև որոշակի կանաչապատման և փոսայցման աշխատանքներ: Պայթեցման աշխատանքներ չեն իրականացվել: Անվտանգության նպատակներով տեղադրվել են երթևեկության կարգավորման նշաններ/ազդանշաններ:

Բնապահպանական աշխատանքների ապահովման նպատակով վերահսկողության նպատակն է՝ ապահովել, որպեսզի շինարարական աշխատանքների իրականացումը համապատասխանի ՇՄԿՊ-ի պահանջներին՝ մշակված ԱԶԲ Բնապահպանական անվտանգության քաղաքականությանը և ՀՀ օրենսդրությանը համապատասխան: Կապալառուն ղեկավարվում է Տրանշ 3-ի ՇՄԿՊ և ՇՄԱԳ-ով, ինչը մրցութային և պայմանագրային փաստաթղթերի, Տեղանքին բնորոշ շրջակա միջավայրի կառավարման պլանի մասն է կազմում, ինչպես նաև Կապալառուի կողմից մշակված Կապալառուի շրջակա միջավայրի կառավարման պլանով, որում մանրամասն ներկայացված են շին. հրապարակի բնապահպանական աշխատանքների իրականացման ու կառավարման պահանջները, մասնավորապես շինարարության ազդեցության մեղմացման աշխատանքները, մշտադիտարկումը և հաշվետվողականության պահանջները: ՇՄԿՊ հետ համապատասխանությունը կանոնավոր կերպով մշտադիտարկվում և հաշվետվություն է ներկայացվում:

Բնապահպանական անվտանգության ապահովման աշխատանքներ, որոնք ներառում են երաշխիքների ընդհանուր կառավարում, ՏՇՄԿՊ-ների վերաբերյալ Կապալառուի բնապահպանական հարցերով թիմի խորհրդատվություն՝ ԱԶԲ Անվտանգության մեխանիզմների քաղաքականության (SPS 2009) չափանիշներին և պահանջներին համապատասխանելու համար, Կապալառուի բնապահպանական փաստաթղթերի վերանայում և հաստատում, շինարարական տեղամասի և կապալառուի զբաղեցրած բոլոր այլ տարածքների մոնիտորինգ, որն իրականացվում է Ինժեների բնապահպանություն գծով մասնագետի և Ճանապարհային դեպարտամենտ հիմնադրամի ԲԱԿԾՂ-ի կողմից: Ամփոփագիրը տրված է ստորև.

**Բնապահպանական մշտադիտարկման կիսամյակային հաշվետվություն, Տրանշ 3, Թալին-Լանջիկ ճանապարհահատված, Հայաստան. Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր, Տրանշ 3 Թալին-Լանջիկ ճանապարհահատված**

Կազմակերպություն	Կարգավիճակ	Անուն	Պաշտոն	Կոնտակտային տվյալներ
ՃԴ ՊՈԱԿ	Ծրագիր իրականացնող կազմակերպություն	Արմեն Բողոյան	Բնապահպանական ազդեցությունների կառավարման ծառայության ղեկավար (ԲԱԿԾՂ)	armen.bodoyan@armroad.am
		Լիլիթ Դիլանյան	Սոցիալական ազդեցությունների կառավարման ծառայության ղեկավար (ՍԱԿԾՂ)	lilit.dilanyan@armroad.am
ԱյԱրԴի Ինջինիրինգ (IRD Engineering)	Վերահսկող ինժեներ	Էդիտա Վարդգեսյան	Բնապահպան	editavard@gmail.com
		Տիգրան Գրիգորյան	Սոցիալական հարցերով մասնագետ	tgrigoryan@altavip.am
Սինոհիդրո Կորպորացիա Synohydro Corporation	Հիմնական կապալառու	Հովիկ Թովմասյան	Բնապահպան	hovik.sinohydro@gmail.com
		Աշոտ Ռեվազյան	Առողջության և անվտանգության մասնագետ (ԱԱՄ)	374 94220067
		Մարտին Ասատրյան	Սոցիալական հարցերով մասնագետ	asatryan.1991@inbox.ru
		Արթուր Պետրոսյան	Հնագիտության մասնագետ	

## **2. ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԸՆԹԱՑԻԿ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ**

### **2.1 Ծրագրի նկարագրությունը**

Հայաստանի Հանրապետությունը ընտրել է Բավրա-Երևան-Ազարակ երթուղին որպես Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի մաս, որը պետք է վերականգնվի, վերակառուցվի և լայնացվի և նշանակել է ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության (ՏԿՏՆ) ճանապարհային դեպարտամենտ հիմնադրամին (ՃԴ) որպես աշխատանքների համակարգող:

Բազմափուլ ֆինասավորման գործիքի շրջանակներում (ԲՖԳ) նախատեսված է վերականգնել և արդիականացնել հյուսիսից հարավ ձգվող ճանապարհները՝ նոր արդիականացված և ընդլայնված հյուսիս-հարավ մայրուղի ձևավորելու նպատակով: Հիմնական նպատակն է՝ ընդլայնել առկա երկուղի ճանապարհները (հիմնականում ոչ բարվոք վիճակում)՝ վերածելով քառուղի ճանապարհների հնարավորության դեպքում գոյություն ունեցող ծրագրերի երկայնքով կամ կառուցելով նոր այլընտրանքային երկուղի ճանապարհներ այն հատվածներում, որտեղ մեկ քառուղի ճանապարհը հնարավոր չի լինի կառուցել:


ԲՖԳ-ի շրջանակներում Ասիական զարգացման բանկը Հայաստանի Հանրապետությանը տրամադրել է վարկ «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի» իրականացման համար՝ Մ1 Թալին-Գյումրի ճանապարհի Թալին-Լանջիկ ճանապարհահատվածի (կմ71-500-կմ90+200) վերակառուցման և բարելավման աշխատանքներն իրականացնելու համար:

Տրանշ 3-ը սկսվում է Թալին համայնքում կմ 71+500 և ավարտվում՝ Լանջիկ համայնքի մոտ կմ 90+200 (ճանապարհի երկարությունը՝ մոտ 18.7 կմ): Այս ճանապարհը ներկայումս 2-րդ կատեգորիայի ճանապարհ է և ունի 2 հակառակ ուղղություններով երթևեկություն: Վերակառուցումից հետո ակնկալվում է, որ այս ճանապարհահատվածը կդառնա բետոնյա ծածկով 1-ին կատեգորիայի ճանապարհ:

Մ2 Երևան-Արտաշատ և Մ1 Երևան-Աշտարակ ճանապարհներում 9 ուղեանցերի կառուցման աշխատանքները ֆինանսավորում են Տրանշ 3-ի միջոցների խնայողություններով: Այս աշխատանքներն իրականացվել են տեղական կապալառուների կողմից, իսկ վերահսկողությունն իրականացվում է Տրանշ 3-ի Ծրագրի կառավարման խորհրդատուի կողմից և ավարտվել են 2017թ. դեկտեմբերի 27-ին:



Բնապահպանական մշտադիտարկման կիսամյակային հաշվետվություն, Տրանշ 3, Թալին-Լանջիկ ճանապարհահատված, Հայաստան. Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր, Տրանշ 3 Թալին-Լանջիկ ճանապարհահատված



Պատկեր 1. Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի Տրանշ 3

## 2.2 Ծրագրի շրջանակներում կնքված Պայմանագրերը և դրանց կառավարումը

Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում ԱԶԲ-ը կանոնավոր կերպով իրականացնում է դիտարկումներ և ստուգումներ՝ ԱԶԲ Անվտանգության մեխանիզմների քաղաքականության (SPS 2009) չափանիշներին և պահանջներին համապատասխան: ԱԶԲ-ը կաջակցի ՃԴ-ին սոցիալական և բնապահպանական ազդեցություններ ու ռիսկերը կառավարելու նպատակով, այդպիսով նպաստելով երկարաժամկետ ներդրումների կայունության խթանմանը:

*Կոնտակտային տվյալներ.*

*Վազգեն Սարգսյան 2, Կամար Բիզնես Կենտրոն, 7-րդ հարկ*

*0010 Երևան, ՀՀ*

*Հեռ.: +374 10 512300, Ֆաքս: +374 10 546374*

*Կայք՝ [www.adb.org/armenia](http://www.adb.org/armenia)*

ՃԴ հիմնադրամը կատարում է ծրագրի իրականացման կառավարում օրական կտրվածքով և ներառում է Սոցիալական և բնապահպանական անձնակազմ, որի պատասխանատվությունների թվում են ծրագրի բոլոր բնապահպանական հարցերի կառավարումը:

*Կոնտակտային տվյալներ.*

*Հեռ.: +37410 511 391*

*Էլ. հասցե՝ [info@armroad.am](mailto:info@armroad.am)*

*Կայք՝ [www.armroad.am](http://www.armroad.am)*

Ծրագրի վերահսկողության խորհրդատուն/Ինժեները իրականացնում է բոլոր շինարարական աշխատանքների վերահսկողություն և ծրագրի հաշվետվողականություն: Խորհրդատուի Շրջակա միջավայրի անվտանգության բաժինը պատասխանատու է շինարարական աշխատանքների վերահսկողության՝ բնապահպանական և հնագիտական ազդեցության տեսանկյունից, և մասնավորապես, Կապալառուի կողմից ՇՄԿՊ-ի իրականացման վերահսկման և հաշվետվողականության համար:

**Բնապահպանական մշտադիտարկման կիսամյակային հաշվետվություն, Տրանշ 3, Թալին-Լանջիկ ճանապարհահատված, Հայաստան. Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր, Տրանշ 3 Թալին-Լանջիկ ճանապարհահատված**

*Կոնտակտային տվյալներ.*

*Էլ. հասցե՝ t3\_talinlanjik\_spea\_ird@irdeng.com*

Շինարարական աշխատանքները իրականացնում են կապալառուները: Կապալառուի բնապահպանության բաժինը պատասխանատու է Կապալառուի ՇՄԿՊ-ի, ՏՇՄԿՊ-երի մշակման և իրականացման, շինարարական աշխատանքների մոնիթորինգի և հաշվետվողականության համար:

*Կոնտակտային տվյալներ.*

*Էլ. հասցե՝ sinohydro\_am\_tl@163.com*

**ՃԴ Բնապահպանական և սոցիալական հարցերով բաժին**

Ծրագրի ազդեցության կառավարման աշխատանքները ստանձնել է Բնապահպանական ազդեցությունների կառավարման ծառայության ղեկավարը:

Արմեն Բողոյան՝ նշանակվել է 2021թ. փետրվարին ՃԴ-ի կողմից որպես Բնապահպանական ազդեցությունների կառավարման ծառայության ղեկավար (ԲԱԿԾՂ), Ծրագրերի նախապատրաստման և իրականացման, այդ թվում նախագծման, շինարարության և վերահսկողության ընթացքում պատասխանատու է ծրագրի բնապահպանական կառավարման և դոնոր կազմակերպությունների բնապահպանական անվտանգության քաղաքականությանն ու ՀՀ օրենսդրությանը համապատասխանելու համար:

Լիլիթ Դիլանյան՝ Սոցիալական ազդեցությունների կառավարման ծառայության ղեկավար, պատասխանատու է Ծրագրի սոցիալական կառավարման և ՀՀ ազգային օրենսդրությանը համապատասխանելու և Ծրագրերի իրականացման, ներառյալ շինարարության և վերահսկողության ընթացքում դոնոր կազմակերպությունների ֆինանսավորման քաղաքականությունների պահպանման համար:

**Խորհրդատուի Բնապահպանական անվտանգության բաժին**

Ներկայումս Խորհրդատուի Բնապահպանական անվտանգության բաժնի կազմում ընդգրկված են՝

- Էդիտա Վարդգեսյանը՝ Բնապահպանության մասնագետը (ԲՄ) պատասխանատու է բնապահպանությանն առնչվող հարցերի անվտանգության ընդհանուր կառավարման համար: Պայմանագրային աշխատող է: Հաշվետու ժամանակահատվածի ընթացքում նրա ներգրավվածությունը կազմում է՝ ամսական 7 օր հունվար, փետրվար, մարտ, ապրիլ, մայիս և հունիս ամիսներին:
- Բորիս Գասպարյանը՝ Հնագիտության մասնագետը (ՀՄ) պատասխանատու է ճանապարհահատվածում առկա հնագիտական հարցերի վերաբերյալ խորհրդատվության, շինարարական աշխատանքների և Հայաստանի հնագիտությանը վերաբերող օրենսդրության միջև փոխհամապատասխանության, հանք կատարված ստուգայցերի, թափոնների կուտակման և բետոնի գործարանի տարածքների համար՝ հնագիտական գնահատման նպատակներից ելնելով: Հաշվետու ժամանակահատվածի ընթացքում նրա

**Բնապահպանական մշտադիտարկման կիսամյակային հաշվետվություն, Տրանշ 3, Թալին-Լանջիկ ճանապարհահատված, Հայաստան. Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր, Տրանշ 3 Թալին-Լանջիկ ճանապարհահատված**

ներգրավվածությունը կազմում է ամսական 0 օր:

**Կապալառուի Առողջության և անվտանգության, բնապահպանության, հնագիտության և սոցիալական հարցերի բաժին (ԱԱԲՀՄ)**

Բաժինը կազմված է 5 անդամներից՝

- Պրն. Ժնգ Ժեն Մին՝ Բաժնի ղեկավարը պատասխանատու է բաժնի ընդհանուր կառավարման համար: Հաշվետու ժամանակահատվածի ընթացքում նա փոխարինել է Լիու Մինգզիանին:
- Հովհաննես Թովմասյան՝ Բնապահպանության գծով մասնագետը աջակցում է ԱԱԲՀՄ բաժնի ղեկավարին շրջակա միջավայրի կառավարման պլանի իրականացման համար: Հաշվետու ժամանակահատվածի ընթացքում նա փոխարինել է պրն. Դավիթ Ղամբարյանին, Ծրագրի Տրանշ 3 Թալին-Լանջիկ հատված:
- Մարտին Ասատրյան՝ Սոցիալական ազդեցության մասնագետը պատասխանատու է սոցիալական հարցերին առնչվող Կապալառուի գործողությունների համապատասխանության ապահովման համար ԱԶԲ-ի Անվտանգության մեխանիզմների քաղաքականությանը:
- Աշոտ Ռեվազյան՝ Անվտանգության և առողջապահության մասնագետը պատասխանատու է անվտանգության և առողջապահության հարցերին առնչվող Կապալառուի գործողությունների համապատասխանության ապահովման համար ԱԶԲ-ի Անվտանգության մեխանիզմների քաղաքականությանը:
- Արթուր Պետրոսյան՝ Հնագիտության մասնագետը պատասխանատու է ՇՄԿՊ-ի իրականացման շրջանակներում շինարարության ընթացքում պատմամշակութային և հնագիտական հուշարձանները բացասական ազդեցությունից պաշտպանելու համար:

**2.3 Ծրագրի աշխատանքները հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում**

Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում իրականացրել են հետևյալ աշխատանքները.

1. Հողային աշխատանքներ
2. Հանույթ, ենթահիմքի, հիմքի և ասֆալտային պատվածքի աշխատանքներ:
3. Ջրահեռացման խողովակների կառուցում, ինչպես նաև որոշակի կանաչապատման և փոսալցման աշխատանքներ:

Հավելված Ա-ում ներկայացված են աշխատանքների իրականացման լուսանկարներ.

Ընթացիկ ժամանակահատվածում Կապալառուի և ենթակապալառուի աշխատողների ընդհանուր թիվը կազմել է միջինը 185, որից 31 չինացիներ են, 154՝ հայեր: Կապալառուն նաև մոտակա համայնքներից ներգրավել է լրացուցիչ/նոր 4 աշխատող:

**2.4 Ծրագրի նախագծում ցանկացած փոփոխության նկարագրություն**

Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում նախագծի որևէ փոփոխություն չի եղել:

## 2.5 Շինարարական մեթոդների հետ համաձայնեցված ցանկացած փոփոխության նկարագրություն

Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում նախագծի շինարարական մեթոդների հետ համաձայնեցված որևէ փոփոխություն չի եղել:


## 3. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

### 3.1 Բնապահպանական անվտանգության աշխատանքների ընդհանուր նկարագրություն

ՃԴ հիմադրամը կատարում է ծրագրի իրականացման կառավարում օրական կտրվածքով և ներառում է Սոցիալական և բնապահպանական անձնակազմ, որի պատասխանատվությունների թվում են ծրագրի բոլոր բնապահպանական հարցերի կառավարումը:

Ծրագրի վերահսկողության խորհրդատու/Ինժեները իրականացնում է բոլոր շինարարական աշխատանքների վերահսկողություն և ծրագրի հաշվետվողականություն: Խորհրդատուի Շրջակա միջավայրի անվտանգության բաժինը պատասխանատու է շինարարական աշխատանքների վերահսկողության՝ բնապահպանական և հնագիտական ազդեցության տեսանկյունից, և մասնավորապես, Կապալառուի կողմից ՇՄԿՊ-ի իրականացման վերահսկման և հաշվետվողականության համար:

Շինարարական աշխատանքները իրականացնում են կապալառուները: Կապալառուի բնապահպանության բաժինը պատասխանատու է Կապալառուի ՇՄԿՊ-ի, ՏՇՄԿՊ-երի մշակման և իրականացման, շինարարական աշխատանքների մոնիթորինգի և հաշվետվողականության համար:



### 3.2 Հողի բերրի շերտի կառավարում

Հաշվետու ժամանակահատվածում հողի բերրի շերտ չի հանվել և չի պահեստավորվել: Կապալառուն զեկուցել է, որ հունիսի վերջի դրությամբ հողի բերրի շերտի ընդհանուր ծավալը կազմել է 172 898.52 մ<sup>3</sup>:

2022թ. հունիսի 30-ի դրությամբ, Կապալառուի կողմից զբաղեցված տեղամասերի կարգավիճակը հետևյալն է՝ ներկայում Կապալառուն օգտագործում է ընդհանուր առմամբ 5 հողի բերրի շերտի կուտակման և տեղադրման վայր: Բոլոր 5 վայրերը ստացել են Ինժեների

հաստատումը: Հաշվետու ժամանակահատվածում գործել է մեկ վայր և ոչ մի վայր չի փակվել (հանձնվել): Նոր հանքեր կամ նյութերի տեղադրման վայրեր չեն բացվել: Կապալառուն չի ներկայացրել իր պլանները հաջորդ եռամսյակի համար նախատեսված հողի բերրի շերտի աշխատանքների վերաբերյալ: Կապալառուն Մաստարա-7 կմ76+600 հատվածում (ՏՇՄԿՊ-ը հաստատվել է 2017թ. նոյեմբերի 6-ին) ընդհանուր առմամբ օգտագործում է 1 հողի բերրի շերտի կուտակման վայր:

Կապալառուին հանձնարարվել է անհրաժեշտության դեպքում գտնել հողի բերրի շերտի պահեստավորման վայր, ինչը չի կատարվել: 2022թ. հունիսի 30-ի դրությամբ, հողի բերրի շերտի կուտակման վայրերի կարգավիճակը ներկայացված է Հավելված Բ-ում:

### **3.3 Շինարարական աղբի կառավարում**

Ըստ Կապալառուի, հաշվետու ժամանակահատվածում հողային աշխատանքների արդյունքում առաջացած ոչ պիտանի հողը տեղադրվել է կմ86+400 հատվածում Մաստարա-1 հանված հողի տեղադրման վայրում: Որպես պիտանի հող հանված ամբողջ հողը նորից օգտագործվել է ճանապարհի լիցքի համար: Հանված հողի տեղադրման վայրում մշտապես հանված ոչ պիտանի հողի ընդհանուր ծավալը կազմում է 95276.5 մ<sup>3</sup>: Ներկայում Կապալառուն հանված ոչ պիտանի հողի և շին.աղբի տեղադրման համար շահագործում է ընդհանուր առմամբ 2 մշտական տեղամաս, բոլոր տեղամասերը հաստատվել են Ինժեների կողմից: Մնացած բոլոր տեղամասերը հանձնվելու են մինչև նոյեմբերի վերջը:

Կապալառուն իր 2022թ. փետրվարի 18-ի թիվ AM-TL-EN-HSE-013 գրությամբ դիմել է Ինժեներին՝ առաջարկելով Մաստարա-2 կմ 82+300-ում և Մաստարա-9 կմ 83+000-ում առկա հողի տեղադրման վայրերն օգտագործել ասֆալտի թափոնների ժամանակավոր պահեստավորման համար: 2022 թվականի փետրվարի 25-ի TL/IT/TR3/WS/22-30 գրությամբ Ինժեները տրամադրեց հաստատում վերը նշված վայրերը օգտագործելու համար: Նախկինում Կապալառուին խորհուրդ էր տրվել համապատասխանաբար թարմացնել համապատասխան ՏՇՄԿՊ-ները և տեղում կազմակերպել ոչ պատշաճ պահված ասֆալտի թափոնների հեռացումը դեպի Ինժեների կողմից հաստատված պահեստավորման նշված վայրեր: Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ, Կապալառուն չի իրականացրել այդ աշխատանքը:

Հանված հողի կուտակման վայրերի կարգավիճակը, ինչպես նաև դրանց շահագործման ՏՇՄԿՊ-երը ներկայացված են Հավելված Բ-ում՝ 2022թ. հունիսի 30-ի դրությամբ:

### **3.4 Բետոնի, ասֆալտի գործարանների և շինարարական ճամբարների շահագործում**

Հաշվետու ժամանակահատվածում Մարալիկի բետոնի գործարանը չի շահագործվել և բետոն չի արտադրվել: Հաշվի առնելով, որ Մարալիկի բետոնի գործարանի մի մասը ապամոնտաժվել է ասֆալտապատման առնչվող որոշման պատճառով Կապալառուից պահանջվել է թարմացնել ՏՇՄԿՊ-ը: 2022թ. հունվարին Կապալառուն նորից ներկայացրել է Մարալիկի բետոնի գործարանի թարմացված ՏՇՄԿՊ-ը և այն պայմանականորեն հաստատվել է: Հաստատումը տրվել է պայմանով, որ Կապալառուն մինչև 2022 թվականի փետրվարի վերջը պետք է տրամադրի հետևյալ բացակայող տվյալները.

- վտանգավոր նյութերի ցանկը, որոնք օգտագործվում են արտադրության և պահեստավորման համար,

**Բնապահպանական մշտադիտարկման կիսամյակային հաշվետվություն, Տրանշ 3, Թալին-Լանջիկ ճանապարհահատված, Հայաստան. Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր, Տրանշ 3 Թալին-Լանջիկ ճանապարհահատված**

- տեղեկատվություն արտադրության արդյունքում առաջացած պինդ թափոնների վերաբերյալ,
- կեղտաջրերի հավաքման համար բաքի գտնվելու վայրը,
- ջրահեռացման համակարգի սխեմա:

Հաշվետու ժամանակահատվածում Կապալառուի կողմից Մարալիկի ասֆալտի գործարանը շահագործվել է միայն մայիս և հունիս ամիսներին՝ արտադրվել է ասֆալտ և ասֆալտապատվել է 197660 մ<sup>2</sup> տարածք:

Մինչև հաշվետու ժամանակաշրջանի ավարտը Կապալառուն բացել է շինարարական նյութերի ժամանակավոր պահեստավորման 4 վայր՝ Մաստարա-1-ԲՀԿՎ /բերրի հողի կուտակման վայր/ կմ79+600 հատվածում (Ինժեները հաստատել է ՏՇՄԿՊ-ը 2018թ. նոյեմբերին), Մարալիկ-2 հանված հողի կուտակման վայր կմ97+950 հատվածում, Մարալիկի բետոնի գործարանի մոտակայքում (ՏՇՄԿՊ-ը հաստատել է 2021թ. դեկտեմբերի 7-ին), Մաստարա-2 հանված հողի կուտակման վայր կմ82+300 հատվածում (օգտագործվում է որպես ասֆալտի թափոնների համար տեղադրման վայր) և Մաստարա-9 հանված հողի կուտակման վայր կմ83+000 հատվածում (օգտագործվում է որպես ասֆալտի թափոնների համար տեղադրման վայր):

Վերջին ամիսներին Մաստարա-1-ԲՀԿՎ-ում կմ79+600 նկատվել է ՏՇՄԿՊ-ի խախտում, մասնավորապես՝ շինարարական նյութը տեղադրվել և չի հեռացվել թույլատրելի տարածքի սահմաններից դուրս: Թեև Կապալառուն հեռացրել է պատշաճ կերպով չպահեստավորված նյութի որոշ մասը, բայց ոչ ամբողջը: Ըստ Կապալառուի, դա կարվի հուլիս ամսվա ընթացքում:

Կապալառուն ամբողջությամբ հեռացրել է ոչ պատշաճ կերպով պահեստավորված հանված նյութը (5615 մ<sup>3</sup>) կմ 80+250 չթույլատրված տարածքից: Ներկայում այս չթույլատրված տարածքը մաքրված է:

Շահագործվող վայրերից ոչ մեկը չի փակվել և/կամ չի հանձնվել: Կապալառուն մտադիր է օգտագործել բոլոր վայրերը ծրագրի նպատակների համար:

Կապալառուն վերսկսել է ապամոնտաժված հաղորդուղիների հեռացումը: Հաշվետու ժամանակաշրջանում մնացած հաղորդուղիները դեռևս գտնվում են օտարման շերտի սահմաններից դուրս չթույլատրված տարածքներում: Կապալառուին հանձնարարված է ժամանակավոր կուտակման համար տարածք հատկացնել և այդ տեղամասից հեռացնել բոլոր ոչ պատշաճ դրված հաղորդուղիները:

### **3.5 Քար մանրացնող գործարանի շահագործում**

Հաշվետու ժամանակաշրջանում Թալին-Լանջիկ ճանապարհահատվածի համար քար մանրացնող գործարան չի հիմնվել:

### **3.6 Քարհանքերի և շինարարական թափոնների կուտակման վայրերի շահագործում**

2022թ. հունիսի վերջի դրությամբ՝ Կապալառուն չի վերսկսել Մաստարա համայնքում կմ86+400 գտնվող շինարարական թափոնների կուտակման վայրի շահագործումը (ՏՇՄԿՊ-ը պայմանականորեն հաստատվել է 2018թ. մարտի 30-ին, կրկնակի հաստատումը՝ 2018թ ապրիլի 13-ին, տեղամասի վերականգնման պլանը հաստատվել է 2021թ. նոյեմբերի 23-ին): Հաշվետու

Ժամանակահատվածում այս տեղամասի վերականգնումը շարունակվել է և այստեղ հավաքվել է 3650 մ<sup>3</sup> հող: Կապալառուն իրականացրել է նաև թեքությունների շտկման աշխատանքներ: Կմ86+400 հատվածում նախկինում հայտնաբերված բոլոր անհամապատասխանությունները մնացել են չշտկված՝ թույլատրված ողջ հանքի տարածքի տեսանելի գծանշումը իրականացված չէ, մոտակա հողերից քարերը հեռացված չեն և կառուցած չէ որևէ պաշտպանիչ պատնեշ: Կապալառուն կմ79+500 հատվածում իրականացրել է չթույլատրված ետլիցք, սակայն տեղանքը վերականգնվել է միայն մասամբ, և անհրաժեշտ է իրականացնել խախտված տարածքի հետագա բարեկարգում: Կապալառուն չի տրամադրել տեղեկատվություն այլ չթույլատրված հողի հանումների և այդ տարածքների համար տեղանքի վերականգնման պլանի վերաբերյալ:

### **3.7 Ծառահատման/ծառատնկման աշխատանքներ**

Հաշվետու ժամանակահատվածում ծառերի հատում և/կամ տնկում չի իրականացվել: Տրանշ 3 Թալին-Լանջիկ ճանապարհահատվածի ծառերի կառավարման ծրագիրը ավարտվել է 2021թ-ին:

### **3.8 Շինարարական տեղամասերի աուդիտ**

Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում իրականացվել են շինարարական տեղամասերի աուդիտ՝ ԱԶԲ Անվտանգության քաղաքականության և ՇՄԿՊ պահանջների հիման վրա մշակված Մոնիթորինգի ծրագրի համաձայն: Ըստ անհրաժեշտության, իրականացվել են չնախատեսված աուդիտի այցելություններ: Կատարվել են ստորև աուդիտի այցելությունները.

- Կապալառուի բնապահպանի կողմից կանոնավոր կերպով իրականացվող մոնիտորինգի այցելություններ շինարարական տեղամասեր՝ շաբաթվա կտրվածքով: Արդյունքները գրանցվել են հաստատված ստուգաթերթիկի նմուշում:
- Ինժեների բնապահպանի կողմից կանոնավոր կերպով իրականացվող ստուգայցեր շինարարական տեղամասեր՝ ամսվա կտրվածքով: Արդյունքները գրանցվել են հաստատված ստուգաթերթիկի նմուշում:
- ՃԴ-ի ԲԱԿՕՂ-ը մասնակցել է Ինժեների բնապահպանի կողմից իրականացվող աուդիտի որոշ այցելություններին՝ առնվազն եռամսյակային կտրվածքով:

Կապալառուի բնապահպանական անձնակազմի կողմից իրականացվել է շրջակա միջավայրի մոնիտորինգ՝ բնապահպանական համապատասխանությունն ստուգելու համար, և ստուգաթերթերն լրացվել են:

Ինժեների բնապահպանը ստուգայցեր իրականացրել է 2022թ. մարտ 25-ին, ապրիլի 26-ին, մայիսի 26-ին, և հունիսի 28-ին (2022թ. հունվարին և փետրվարին ստուգայցեր չեն իրականացվել): Այցելություններին մասնակցել են նաև Կապալառուի բնապահպանը և Առողջության ու անվտանգության մասնագետը: Այդ այցելությունների նպատակն էր՝ ստուգել Կապալառուի ՇՄԱԳ/ՇՄԿՊ/ԿՇՄԿՊ-ի հետ համապատասխանությունը:

Առողջությանն ու անվտանգությանն առնչվող բոլոր մանրամասները ներկայացվել են Ինժեների Ամսական հաշվետվություններում:

### **3.9 ԱԶԲ առաքելություններ**

**Բնապահպանական մշտադիտարկման կիսամյակային հաշվետվություն, Տրանշ 3, Թային-Լանջիկ ճանապարհահատված, Հայաստան. Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր, Տրանշ 3 Թային-Լանջիկ ճանապարհահատված**

Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում ԱԶԲ-ի վերջին առաքելության ընթացքում (2021թ. դեկտեմբերի 7) հայտնաբերված թերության շտկումը շարունակվել է.

2021թ. դեկտեմբերի 7-ին ԱԶԲ առաքելության այցելության ընթացքում կատարված նշում					
1	Ծրագրի վերաբերյալ ճանապարհի սկզբում և վերջում տեղադրված ցուցանակները ցուցանակները պետք է թարմացվեն, քանի որ պաստառների վրայի տեղեկատվությունը ջնջվել է և ընթեռնելի չէ:	Ուղղված է	Տեղեկատվական ցուցանակը տեղադրված է	Այլ խնդրանք առկա չէ	

**3.10 Խնդիրների լուծում (հիմնվելով Անհամապատասխանության ծանուցումների վրա)**

Առաջացած խնդիրները հասցեագրելու անհրաժեշտությունը նկարագրելու համար կիրառվում է երկու սահմանում.

1) փոքր անհամապատասխանությունները այն խնդիրներն են, որոնք մոնիթորինգի այցերի ընթացքում գրանցվել են ստուգաթերթիկում և ներկայացվել են Կապալառուին՝ ուղղիչ գործողություններ իրականացնելու նպատակով: Այս դեպքում խնդիրները համեմատաբար աննշան են կամ շտկող գործողությունը կարող է արագ իրականացվել:

2) Էական անհամապատասխանությունները լուրջ խնդիրներ կամ շարունակական բնույթ կրող անհամապատասխանություններն են, որոնց շտկման համար Ինժեները պաշտոնական գրություն է ներկայացնում:

**Էական անհամապատասխանություններ**

Բոլոր կիրառելի դեպքերից Կապալառուն ամբողջությամբ համապատասխանում է խնդիրների 45%-ին, մասնակի համապատասխանում է՝ 30%-ին և անհամապատասխան են՝ 25%:

**Աղյուսակ 3-1. 2022թ. հունիսի վերջի դրությամբ խնդիրների լուծմանն ուղղված ամփոփ աշխատանքներ**

Ամփոփ աղյուսակ	
Ծրագրի ներքո առկա խնդիրների ընդհանուր քանակը	60
Չլուծված խնդիրների քանակը	33
Լուծված խնդիրների քանակը	27
Լուծված խնդիրների %	45.0
Հաշվետու այս ժամանակահատվածում չլուծված խնդիրներ	1



Բնապահպանական մշտադիտարկման կիսամյակային հաշվետվություն, Տրանշ 3, Թալին-Լանջիկ ճանապարհահատված, Հայաստան. Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր, Տրանշ 3 Թալին-Լանջիկ ճանապարհահատված

Հաշվետու այս ժամանակահատվածում լուծված մնացած խնդիրներ	1
--	---

### 3.11 Միտումները

Հաշվետու ժամանակահատվածում առաջացած/լուծված հիմնական խնդիրները ներկայացված են ստորև՝ Աղյուսակ 3-1-ում.

Ամսական հաշվետվություն No	Խնդիրների ընդհանուր քանակ	Լուծված խնդիրներ %	Ուշ լուծված խնդիրներ %
<b>2021</b>			
մարտ	55	32.7	0
ապրիլ	56	30.4	3.6
մայիս	39	37.5	0
հունիս	41	26.3	0
հուլիս	57	22.8	3.5
օգոստոս	59	22.0	5.9
սեպտեմբեր	61	27.9	4.9
հոկտեմբեր	59	32.2	10.9
նոյեմբեր	58	43.1	9.5
դեկտեմբեր	57	52.6	1.8
<b>2022</b>			
հունվար	55	52.7	0
փետրվար	55	52.7	1.8
մարտ	55	52.7	3.6
ապրիլ	57	50.9	0
մայիս	58	48.3	1.7
հունիս	60	45.0	Պետք է որոշվի 2022թ հուլիսին

Աղյուսակ 3-1. 2022թ. հունվար-հունիս հաշվետու ժամանակահատվածում առաջացած/լուծված խնդիրները

**Բնապահպանական մշտադիտարկման կիսամյակային հաշվետվություն, Տրանշ 3, Թալին-Լանջիկ ճանապարհահատված, Հայաստան. Հյուսիս-Հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր, Տրանշ 3 Թալին-Լանջիկ ճանապարհահատված**

Ամիս	Առաջացած խնդիր		Լուծված խնդիր	
	Խնդիր	Կապալառուի գործողությունը	Խնդիր	Կապալառուի գործողությունը
Հունվար	Կմ80+250 հատվածում հայտնաբերվել է հանված քարերի տեղադրման չթույլատրված վայր	Որևէ գործողություն չի իրականացվել	Պահանջվել է ներկայացնել թարմացված ՏՇՄԿՊ Մարալիկի բետոնի գործարանի համար	2022թ. հունվարի 10-ին Կապալառուն ներկայացրել է թարմացված ՏՇՄԿՊ
Փետրվար	-	-	-	-
Մարտ	Բետոնի գործարանի տարածքը չափազանց ցեխոտ էր:	Բետոնի գործարանի տարածքը պետք է մաքրվի ցեխից:	Պահանջվել է իրականացնել առաջին օգնության տրամադրման վերաբերյալ դասընթաց	Առողջության, անվտանգության պահպանման և առաջին օգնության տրամադրման վերաբերյալ դասընթացն իրականացվել է 2022թ. մարտի 2-ին
Ապրիլ	-	-	Բետոնի գործարանի տարածքը չափազանց ցեխոտ էր:	Բետոնի գործարանի տարածքը մաքրվել է ցեխից:
	-	-	Պահանջվում է հնազետ	Ընդունվել է հնազետ, որը սկսել է զգայուն տարածքում աշխատանքների հսկողությունը
Մայիս	-	-	-	-
Հունիս	Փոշու արտանետումները չափազանց մեծ են	Որևէ գործողություն չի իրականացվել	Ճանապարհի երկու ծայրերում պետք է տեղադրվի Ծրագրի իրականացման վերաբերյալ տեղեկատվական պաստառ	Ծրագրի իրականացման վերաբերյալ տեղեկատվական պաստառը տեղադրվել է

**3.12 Շրջակա միջավայրի վրա չնախատեսված ազդեցությունները կամ ռիսկերը**

Համաձայն հաստատված Մաստարա-1 հանված հողի տեղադրման վայրի (կմ86+400) վերականգնման հաստատված պլանի՝ հետլիցքի համար պահանջվող ծավալը կազմում է 80 000 մ<sup>3</sup>: Դեռևս անհրաժեշտ է 53254.5 մ<sup>3</sup> հետլիցքի նյութ: Կապալառուից պահանջվել է տեղեկատվություն տրամադրել այդ պահանջվող ծավալների աղբյուրների մասին, սակայն հունիսի վերջի դրությամբ այդ տեղեկությունը չի տրամադրվել:

**4. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

#### **4.1 Հաշվետու ժամանակահատվածում իրականացված մոնիթորինգի արդյունքները**

Հաշվետու ժամանակահատվածում բնապահպանական պարամետրերի գործիքային չափումներ և մոնիթորինգ (փոշի, աղմուկ, ջուր և վիբրացիա) չեն կատարվել: Հունվար, փետրվար, մարտ և ապրիլ ամիսներին եղանակային անբարենպաստ պայմանների և աշխատանքների քիչ ծավալի պատճառով գործիքային ստուգում չի իրականացվել:

Մայիսին Կապալառուն տեղեկացրել է Ինժեներին, որ Տրանշ 3 Թալին-Լանջիկ ճանապարհահատվածում փոշու, աղմուկի և վիբրացիայի գործիքային չափումները չեն իրականացվել «ATMS SOLUTIONS» ՍՊԸ-ի հետ պայմանագրի ավարտի պատճառով: Կապալառուն չի կարող որևէ ընդունելի հիմնավորում ներկայացնել Մոնիտորինգ իրականացնող ընկերության հետ Պայմանագիրը չերկարաձգելու համար, Ինժեները խնդրել է որքան հնարավոր է շուտ կնքել նոր պայմանագիր:

Տրանշ 3 Թալին-Լանջիկ ճանապարհահատվածի փոշու, աղմուկի և վիբրացիայի բնապահպանական պարամետրերի գործիքային չափումներն իրականացվել են միայն հունիսին «ATMS SOLUTIONS» մասնագիտացված կազմակերպության կողմից՝ 24.06.2022թ-ին հիմնական կապալառու «Սինտիդրո Քորփորեյշն» ՍՊԸ-ի հետ կնքված պայմանագրի հիման վրա: N1 հաշվետվությունը ներկայացված է :

Չափումների ընդհանուր պատկերը ներկայացված է ստորև.

1. Փոշու առումով ՀՀ և IFC չափանիշների գերազանցում չի եղել: Այնուամենայնիվ, չափման որոշ կետերում ելակետային մակարդակն (չափված 30.11.2016) մինչև 2 անգամ գերազանցվել է N1 կետում PM 2.5 և հավասար էր ելակետային մակարդակին PM10: Այս գերազանցումները համարվել են էական և անընդունելի. թեև Կապալառուն զեկուցել է, որ իրականացվել է տեղամասերի կանոնավոր ջրում, սակայն Ինժեների մոնիտորինգը ցույց է տվել, որ փոշու դեմ պայքարի միջոցներ չեն ձեռնարկվել, և որևէ հաստատող նկար չի տրամադրվել: Կապալառուից պահանջվել է ձեռնարկել փոշու դեմ պայքարի առավել արդյունավետ միջոցներ:
2. Աղմուկի մակարդակի ՀՀ չափանիշները չափումների իրականացման երկու կետերում՝ N1 և N4, արդեն գերազանցել են սահմանված ստանդարտը, իսկ ելակետային մակարդակը (չափված 30.11.2016) ստանդարտից ավելի բարձր էր: Այսպիսով, կիրառվել է IFC +3dB կանոնը: Ելակետային մակարդակը գերազանցվել է համապատասխանաբար մինչև 19,6 դԲ և 16,8 դԲ, ինչը կարևոր է: Կապալառուից պահանջվել է ձեռնարկել աղմուկի վերահսկման արդյունավետ միջոցներ:
3. Վիբրացիայի մակարդակը ՀՀ սահմանարական նորմերի սահմաններում էր:

#### **4.2 Երկարարական աղբի կառավարում**

Ներկայում Կապալառուն հանված, օգտագործման համար ոչ պիտանի հողի տեղադրման և ասֆալտի թափոնների համար շահագործում է ընդհանուր առմամբ 2 մշտական տեղամաս, որոնք հաստատվել են Ինժեների կողմից: Երկու տեղամասերն էլ փաստացի վերածվել են ասֆալտի թափոնների ժամանակավոր պահեստների, քանի որ օգտագործման համար ոչ

պիտանի հողն այլևս այստեղ չի տեղադրվում, այլ տարվում է կմ86+400 գտնվող տարածք՝ Մաստարա-1-ի վերականգնման համար: Մնացած բոլոր հանված հողի տեղադրման վայրերը հանձնվել են մինչև 2021 թվականի վերջ:

Կապալառուին հանձնարարվել է ուղղել բոլոր թերությունները և իրականացնել բոլոր հողի տեղադրման վայրերի փակման ընթացակարգը և դրանք հանձնել համայնքներին, քանի որ ամբողջ օգտագործման համար ոչ պիտանի հողը, որը կառաջանա հետագայում, կօգտագործվի Մաստարա 1-ի հողի տեղադրման վայրի վերականգնման համար:

Հաշվետու ժամանակաշրջանում առաջացած ամբողջ ասֆալտի թափոնները կուտակվել են հետագայում ճանապարհաշինության մեջ օգտագործելու նպատակով: Ինժեները հաստատել է ՊԿ87+200 տեղամասի աղբի տեղադրման վայրի ՏՇՄԿՊ-ը: Փակվել և համայնքներին են հանձնվել կմ80+800 (Մաստարա), կմ72+500 (Թալին), կմ87+200 (Լանջիկ) և կմ88+500 (Լանջիկ) հանված հողի կուտակման բոլոր վայրերը:

Շինարարական աղբ. Կապալառուն իրականացրել է աշխատանքային տեղամասի և շինարարական ճամբարի մաքրման աշխատանքներ: Ամբողջ աղբը հավաքվել և տեղափոխվել է Մարալիկի աղբավայր՝ համայնքի հետ կնքված պայմանագրի համաձայն:

### **4.3 Առողջություն և անվտանգություն**

#### **4.3.1 Համայնքի առողջության և անվտանգության ապահովումը**

Հաշվետու ժամանակահատվածում վերատեղադրվել է 150 վնասված ճանապարհային երթևեկության նշան և տեղադրվել 40 նոր բետոնե բլոկ: Կապալառուն իրականացրել է նաև ճանապարհների սպասարկման որոշ աշխատանքներ, ինչպիսիք են ձնամաքման, բետոնե բլոկների վրա տեղադրված լուսանդրադարձիչների մաքրման, փոսալցման և ճանապարհների պահպանման աշխատանքները: Հաշվետու ժամանակահատվածում շրջանցիկ ճանապարհ չի բացվել:

#### **4.3.2 Աշխատողի առողջությունն ու անվտանգությունը**

Հաշվետու ժամանակահատվածում ճանապարհատրանսպորտային պատահար չի արձանագրվել: Ինչ վերաբերում է 2021թ. ապրիլի 29-ին տեղի ունեցած ճանապարհատրանսպորտային պատահարին, Կապալառուն տեղեկացրել է, որ ոստիկանության հետաքննությունը դեռ շարունակվում է, և այն ավարտվելուց հետո վերջնական հաշվետվությունը ոստիկանության եզրակացության հետ միասին կտրամադրվի ԱԶԲ-ին և ՃԴ-ին:

2020թ. նոյեմբերին Կապալառուն ներկայացրել է COVID-19 հետ կապված Առողջության և անվտանգության պլան, որը հաստատվել է: 2021թ. հունիսին Կապալառուն ներկայացրել է ԿՇՄԿՊ-ի թարմացված նախագիծը, որն ուսումնասիրվել է Ինժեների կողմից և ուղարկվել է Կապալառուին՝ համապատասխան ուղղումներ կատարելու համար: Փոփոխված ԿՇՄԿՊ-ը Կապալառուն ներկայացրել է 2022 թվականի փետրվարի 2-ին:

Կապալառուի աշխատողների հետ շինարարական տեղամասում կանոնավոր կերպով իրականացվել են իրավիճակի քննարկումներ:

